# Հ Ր Ա Մ Ա Ն N 474-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«17» **ՍԵՊՏԵՄԲԵՐԻ** 2015 **Թ**. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԱՐԵՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի «ե» ենթակետը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետի (ծածկագիր՝ 14-2.1-19) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի N 5 որոշումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2015 թվականի սեպտեմբերի 17-ից լուծել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետի (ծածկագիր՝ 14-2.1-19) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնող Արևիկ Անդրանիկի Հարությունյանի հետ 2015 թվականի հուլիսի 3-ին կնքված N 66 աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել վերջնահաշվարկի կատարումը:

**ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**